

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ բանահավաքները, մեծ եռանդ ու ջանք գործադրելով, ժամանակի ընթացքում գրի են առել Հայաստանի տարբեր գավառների հեֆիաթները, որոնց մի մասը տպագրվել է ազգագրական ժողովածուներում ու հանդեսներում, իսկ մի խոշոր մասն էլ մնացել է անտիպ, ձեռագիր վիճակում: Անցյալում տպագրված էջուրքերը իրենց սահմանափակ տիրաժի և մասսայական օգտագործման պատճառով վաղուց սպառվել և դարձել են հազվագյուտ օրինակներ, իսկ ձեռագիր էջուրքերը ցրված են տարբեր արխիվներում: Այսպիսով, մինչև օրս հրատարակի վրա չունենք հայկական բազմադարյան բանահյուսության ամենասիրված ու տարածված ժանրերից մեկի՝ հեֆիաթների ֆիչ քե շատ ամբողջական հրատարակություն:

Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը ձեռնարկել է հայ ժողովրդական հեֆիաթների բազմահատոր հրատարակությանը, որն ընդգրկում է ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ էջուրքեր և նպատակ ունի ամբողջական ու անաղարտ հրատարակ հանել մեր ժողովրդի բանավոր ստեղծագործության հեֆիաթի ժանրի հարուստ ու արժեքավոր ժառանգությունը:

Մանրթանալով ուսսական ժողովրդական բանահյուսության ժողովածուների էջուրքերին Վ. Ի. Լենինը ժամանակիցն էջել է, որ այդ էջուրքերը շատ պիտանի ու կարևոր են մեր օրերում ժողովրդական հոգեբանությանն ուսումնասիրելու համար: Դրանց հիման

վրա, — ասել է Վ. Ի. Լենինը, — կարելի է գրել հրաշալի ուսումնասիրություն ժողովրդական ձգտումների և սպասելիքների մասին:

Հեփաթների մեջ արտացոլված են աշխատավոր ժողովրդի կյանքը, կենցաղն ու ապրելակերպը, անարդարությունն ու շարուքյունը ոչնչացնելու և խաղաղ ու ներդաշնակ կյանք հաստատելու նրա ազնիվ ձգտումը: Սյուժետային բազմակողմանի գծերով, վառ երևակայությամբ ու ինքնատիպ արվեստով հեփաթները հասարակական-նախադասական և գեղարվեստական խոշոր արժեք են ներկայացնում:

Հայկական ժողովրդական հեփաթների ներկա հրատարակությունը անցյալի մեր կուլտուրայի այդ լավագույն ժառանգության արժեքավորումն ու գնահատումն է:

Ներկա հրատարակությունը խթան կհանդիսանա հայկական հեփաթների բազմակողմանի ուսումնասիրության համար, ինչպես նաև հարուստ նյութ կընձեռի ազգագրության, սյամուսյան, լեզվաբանության և մի շարք բնագավառների հետազոտողներին:

Հայ ժողովրդական հեփաթների ներկա գիտական հրատարակությունն իրագործվում է ակադեմիկոս Հովսեփ Սրբելու ընդհանուր խմբագրությամբ:

**Մ. Շ. Բեդյանի անվան
Գրականության ինստիտուտ**